

## ԿԱՐԳ

### «ՇՈՒՇԻԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՌԵԿՏՈՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ

#### I. Ընդհանուր դրույթներ

1. «Շուշիի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) ռեկտորի ընտրության կարգը մշակված է «Հիմնադրամների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի և համալսարանի կանոնադրության հիման վրա:
2. Համալսարանի ռեկտորի ընտրությունը կազմակերպում է համալսարանի հոգաբարձուների խորհուրդը՝ բաց մրցույթով, փակ գաղտնի քվեարկությամբ, խորհրդի անդամների ընդհանուր ձայների պարզ մեծամասնությամբ: Ռեկտորն ընտրվում է 5 տարի ժամկետով:
3. Սույն կարգով սահմանվում է Համալսարանի ռեկտորի ընտրության, թեկնածուների առաջադրման կարգը, մրցույթին մասնակցելու պայմանները և մրցույթի ընթացակարգը:

#### II. Մրցույթի հիմնական պայմանները

4. Ռեկտորի պաշտոնում կարող է ընտրվել այն գործունակ չափահաս անձը, ով ունի գիտությունների դոկտորի կամ թեկնածուի գիտական աստիճան և պրոֆեսորի կամ դոցենտի գիտական կոչում:
5. Ռեկտոր չի կարող ընտրվել այն անձը՝
  - 1) ով դատապարտվել է հանցագործություն կատարելու համար, և նրա դատվածությունը սահմանված կարգով մարված կամ հանված չէ.

- 2) ում օրենքի համաձայն արգելվում է զբաղեցնել ղեկավար պաշտոններ.
- 3) ով 3 տարվա ընթացքում եղել է սնանկացման պատճառով լուծարված և պարտատերերի օրինական պահանջները չբավարարած կազմակերպության ղեկավարը:
6. Մրցույթին մասնակցելու համար ռեկտորի պաշտոնի թեկնածուն առաջադրվում է ինքնաառաջադրմամբ:
7. Մրցույթի անցկացման ժամկետը (օրը) որոշում է հոգաբարձուների խորհուրդը:
8. Մրցույթի մասին հայտարարությունները հրապարակվում են համալսարանի կայքում և “Լուսարար” օրաթերթում:
9. Մրցույթի անցկացման մասին ռեկտորի թափուր պաշտոնի բաց մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերի հանձնման վերջնաժամկետ է սահմանվում համալսարանի կայքում հայտարարության հրապարակումից հետո 30 օրյա ժամկետը:
10. Մրցույթին մասնակցելու համար ներկայացվում է հետևյալ փաստաթղթերը.
  - ա) դիմում համալսարանի հոգաբարձուների խորհրդին,
  - բ) անձնագրի պատճենը,
  - գ) կադրերի հաշվառման անձնական թերթիկ,
  - դ) երկու լուսանկար 3x4 չափի,
  - ե) համալսարանի զարգացման հայեցակարգ,
  - զ) գիտական աստիճանի և գիտական կոչման վկայականների պատճենները,
  - է) հրապարակված հոդվածների, տպագրված գիտական և ուսումնամեթոդական աշխատանքների սահմանված կարգով հաստատված ցանկը,
  - ը) աշխատանքային գրքույկի պատճենը՝ վավերացված հիմնական աշխատանքի վայրում,
  - թ) բնութագիր հիմնական աշխատանքի վայրից,
  - ժ) համառոտ ինքնակենսագրություն,
  - ի) տվյալներ պարզևատրումների, մրցանակների, պատվավոր կոչումների վերաբերյալ:
11. Փաստաթղթերը ներկայացվում են համալսարանի գրասենյակ:
12. Հավակնորդի դիմումը չի ընդունվում, եթե ներկայացված չէ սույն կարգի 10-րդ կետում նշված բոլոր փաստաթղթերը կամ պահպանված չէ դիմումի ներկայացման ժամկետը:

13. Հոգաբարձուների խորհրդի քարտուղարը կազմում է հավակնորդների ցուցակը, որում նշվում է հավակնորդի ծննդյան տարեթիվը, գիտական աստիճանը, գիտական կոչումը, տպագրված գիտական և ուսումնամեթոդական աշխատանքների քանակը, տեղեկություններ աշխատանքային գործունեության պարբերականների, մրցանակների, և պատվավոր կոչումների մասին:
14. Եթե առաջադրված թեկնածուն չի բավարարում մրցույթի հայտարարության տեքստում նշված պայմաններին և պահանջներին, ապա խորհրդի քարտուղարի գրավոր եզրակացությամբ մերժվում է թեկնածուի առաջադրումը:
15. Ընտրությունից առնվազն 3 աշխատանքային օր առաջ այդպիսի մերժում չստացած թեկնածուի մասնակցությունը մրցույթին համարվում է թույլատրված:
16. Խորհրդի քարտուղարը մրցույթին մասնակցելու թույլատրված հավակնորդների ցուցակը ներկայացնում է հոգաբարձուների խորհրդի անդամներին՝ քվեարկությունից առնվազն 3 աշխատանքային օր առաջ փաստաթղթերին ծանոթանալու համար:

### **III. Մրցույթի անցկացման ընթացակարգը**

17. Հոգաբարձուների խորհրդի նախագահը պարզաբանում է մրցույթի անցկացման ընթացակարգը:
18. Հոգաբարձուների խորհրդի նիստում հավակնորդների տվյալները ներկայացնում է խորհրդի քարտուղարը: Խորհրդի քարտուղարը հրապարակում է նաև թեկնածուների վերաբերյալ տեղեկատվություն:
19. Հոգաբարձուների խորհրդում հավակնորդները ներկայացնում են Համալսարանի զարգացման իրենց ծրագրերը, որից հետո խորհրդի անդամների կողմից կարող են հարցեր ուղղվել հավակնորդներին:
20. Հարցերը դադարեցվում են նախագահի առաջարկությամբ՝ խորհրդի որոշմամբ:
21. Այնուհետև նախագահի առաջարկով սկսվում է մտքերի փոխանակություն՝ ելույթներ թեկնածուների վերաբերյալ: Հոգաբարձուների խորհրդի անդամներն իրենց ելույթներում կարող են ներկայացնել իրենց դիրքորոշումը կայանալիք քվեարկության նկատմամբ:

22. Քննարկման ավարտից հետո հավակնորդներին տրվում է եզրափակիչ ելույթի հնարավորություն:
23. Հավակնորդի քննարկումն ավարտվում է խորհրդի նախագահի եզրափակիչ ելույթով: Քննարկման արդյունքում խորհրդի որոշմամբ հավակնորդներն ընդգրկվում են փակ գաղտնի քվեարկության ցուցակում:
24. Փակ գաղտնի քվեարկության համար քվեաթերթիկները պատրաստում է հաշվիչ հանձնաժողովը:
25. Քվեաթերթիկում նշվում է լրացման կարգը, քվեաթերթիկի ձախ կողմում հավակնորդների հերթական համարում այբբենական կարգով նշվում է ազգանունը, անունը, հայրանունը, իսկ քվեաթերթիկի աջ կողմում յուրաքանչյուր հավակնորդի ազգանվան դիմաց նշվում են «կողմ եմ» բառը: Յուրաքանչյուր հավակնորդի ազգանվան դիմաց «կողմ եմ» բառի դիմաց տեղադրվում է առանց նշումի վանդակ: Քվեաթերթիկի ձևը սահմանված է սույն կարգի թիվ 1 հավելվածում:
26. Խորհրդի քարտուղարը հավակնորդների փակ գաղտնի քվեարկության քվեաթերթիկները, խորհրդի անդամների ցուցակը և քվեարկության արդյունքների գրանցման ձևաթղթերը հանձնում է հաշվիչ հանձնաժողովի նախագահին:
27. Հաշվիչ հանձնաժողովը կազմակերպում է քվեարկությունը՝ ապահովում է քվեարկության համար անհրաժեշտ պայմաններ, ընտրողների ազատ ընտրական իրավունքի իրականացումը և պաշտպանությունը: Քվեաթերթիկների գրանցման ցուցակները վարելու, քվեաթերթիկները բաժանելու և քվեատուփը հսկելու համար, հաշվիչ հանձնաժողովի նախագահը կատարում է աշխատանքի բաժանում՝ հանձնաժողովի անդամների միջև:

#### **IV. Քվեարկության կարգը**

28. Հոգաբարձուների խորհրդում քվեարկությանը մասնակցելու իրավունք ունեն խորհրդի նիստին մասնակցող բոլոր անդամները՝ հավասար իրավունքով:
29. Քվեաթերթիկները քվեարկողներին հանձնում է հաշվիչ հանձնաժողովի անդամը: Քվեաթերթիկ ստացողը ստորագրում է ցուցակում՝ իր անվան դիմաց:

30. Քվեաթերթիկի իր նախընտրած թեկնածուի օգտին քվեարկելու դեպքում, այդ թեկնածուի ազգանվան դիմաց «կողմ եմ» բառի դիմաց առկա առանց նշումի վանդակում դնում է V-ձևի նշանը:

31. Քվեարկության արդյունքում վավեր են համարվում.

ա) այն քվեաթերթիկները, որոնցում նշված թեկնածուներից յուրաքանչյուրի ազգանվան դիմաց առանց նշումի վանդակներից միայն մեկում է կատարված V-ձևի նշում,

բ) քվեաթերթիկում չկան չնախատեսված նշումներ, ընդգծումներ, գրառումներ:

34. Անվավեր են ճանաչվում այն քվեաթերթիկները, որոնցում.

ա) որևէ թեկնածուի ազգանվան դիմաց առանց նշումի վանդակներում V-ձևի նշում չի կատարված,

բ) քվեաթերթիկում կան չնախատեսված նշումներ, ընդգծումներ, գրառումներ,

գ) նշված թեկնածուներից յուրաքանչյուրի ազգանվան դիմաց առանց նշումի վանդակներում կատարված է մեկից ավել V-ձևի նշում:

35. Քվեարկությունն ավարտվելուց անմիջապես հետո առանձին սենյակում հաշվիչ հանձնաժողովն իրականացնում է ձայների հաշվարկում:

36. Քվեաթերթիկն անվավեր ճանաչելու մասին որոշումը կայացնում է հաշվիչ հանձնաժողովը:

37. Քվեարկության արդյունքներով հանձնաժողովը կազմում է արձանագրություն: Արձանագրության ձևը սահմանված է սույն կարգի թիվ 2 հավելվածում:

38. Արձանագրության մեջ թեկնածուների ցուցակը տրվում է ըստ ստացած ձայների քանակի նվազման հաջորդականության:

39. Արձանագրությունը ստորագրում են հաշվիչ հանձնաժողովի նախագահը և անդամները:

40. Հիմք ընդունելով քվեարկության արդյունքները հաշվիչ հանձնաժողովն ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝

1) մրցույթում հաղթող ճանաչելու մասին,

2) քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու և կրկնակի քվեարկություն անցկացնելու մասին,

3) քվեարկության երկրորդ փուլ անցկացնելու մասին:

41. Քվեարկության արդյունքում հաղթող է ճանաչվում այն հավակնորդը, որը ստացել է խորհրդի ընդհանուր կազմի ձայների կեսից ավելին:

42. Հաշվիչ հանձնաժողովի նախագահը հոգաբարձուների խորհրդի նիստում հրապարակում է փակ գաղտնի քվեարկության արդյունքները:
43. Խորհուրդը բաց քվեարկությամբ, ձայների պարզ մեծամասնությամբ հաստատում է հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունը և քվեարկության արդյունքները:
44. Ռեկտորի պաշտոնի համար մեկից ավելի անձանց քվեարկության արդյունքում հավասար քանակով ձայներ ստացած թեկնածուների միջև երկու շաբաթ հետո անցկացվում է քվեարկության երկրորդ փուլ:
45. Ռեկտորի պաշտոնի համար մեկից ավելի անձանց քվեարկության արդյունքում առավելագույն, սակայն ընտրվելու համար ոչ բավարար ձայներ ստացած թեկնածուի համար, երկու շաբաթ հետո անցկացվում է քվեարկության երկրորդ փուլ:
46. Քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու դեպքում նշանակվում է ռեկտորի նոր ընտրություն:
47. Խորհրդի քարտուղարը խորհրդի ընդունած որոշումն ոչ ուշ, քան հինգ աշխատանքային օրվա ընթացքում ուղարկում է ԼՂՀ Կրթության, գիտության և սպորտի նախարարին:

## **V. Եզրափակիչ դրույթներ**

48. Սույն կարգը հաստատվում, փոփոխվում կամ լրացվում է Համալսարանի հոգաբարձուների խորհրդի որոշմամբ:
49. Սույն կարգն ուժի մեջ է մտնում Համալսարանի հոգաբարձուների խորհրդում հաստատվելուց հետո հաջորդ օրը:
50. Այն հարցերը, որոնք ներառված չեն սույն կարգում, կարգավորվում են ԼՂՀ նորմատիվ իրավական ակտերով և Համալսարանի կանոնադրությամբ:

Հոգաբարձուների խորհրդի քարտուղար՝

**Ռ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Քվեաթերթ

«Շուշիի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամի ռեկտորի ընտրության

Քվեարկողը իր նախընտրած թեկնածուի ազգանվան դիմաց «կողմ եմ» բառի դիմացի վանդակում դնում է V-ձևի նշան:

Հ/հ	Հավակնորդի ազգանունը, անունը, հայրանունը	Քվեարկություն
		Կողմ եմ <input data-bbox="1353 741 1489 815" type="checkbox"/>
		Կողմ եմ <input data-bbox="1353 936 1489 1010" type="checkbox"/>
		Կողմ եմ <input data-bbox="1353 1160 1489 1234" type="checkbox"/>

Արձանագրություն N°

«Շուշիի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամի ռեկտորի ընտրության հաշվիչ հանձնաժողովը հետևյալ կազմով՝

- 1.
- 2.
- 3.

Ամփոփելով 201\_\_\_\_\_թ. \_\_\_\_\_-ին համալսարանի ռեկտորի ընտրության արդյունքները պարզեց.

Հոգաբարձուների խորհրդում ընդգրկված են 20 անդամ:

Հանձնաժողովը, բացելով փակ գաղտնի քվեարկության քվեատուփը, պարզեց.

1. փակ գաղտնի քվեարկությանը մասնակցելու համար քվեաթերթիկներ են ստացել հոգաբարձուների խորհրդի \_\_\_\_\_ անդամ,
2. քվեարկությանը մասնակցել են հոգաբարձուների խորհրդի \_\_\_\_\_ անդամ,
3. քվեատուփում հայտնաբերվել է \_\_\_\_\_ քվեաթերթիկ,
4. անվավեր են ճանաչվել \_\_\_\_\_ քվեաթերթիկ,
5. ըստ քվեարկության արդյունքների՝ հավակնորդները ստացել են հետևյալ ձայները՝
  - 1) ..... կողմ \_\_\_\_\_ դեմ,
  - 2) ..... կողմ \_\_\_\_\_ դեմ,
  - 3) ..... կողմ \_\_\_\_\_ դեմ,

Այսպիսով, հանձնաժողովը արձանագրում է՝

քվեարկության արդյունքում առավել քանակությամբ կողմ ձայներ է ստացել և համալսարանի ռեկտոր է ընտրվել \_\_\_\_\_ կամ՝

նշանակվում է ռեկտորի ընտրության երկրորդ փուլ.

կամ՝ ռեկտորի ընտրությունը համարվում է չկայացած:

Ընտրական հանձնաժողովի նախագահ \_\_\_\_\_

Անդամներ՝ \_\_\_\_\_

\_\_\_\_\_  
\_\_\_\_\_



